

# Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման)

## հիփոթեքային վարկեր

**Վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը, կիրառման դեպքերը և վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերն ու պայմանները, ներառյալ նաև հնարավոր անբարենպաստ հետևանքները**

1. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում կրում է պատասխանատվություն: Պատասխանատվության ձևերն են՝
  - ա) վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարում,
  - բ) տուժանք:
2. Տուժանքի դեպքում վարկառուն պարտավորվում է վճարել 5 կետով սահմանված չափի տուժանք՝ հաշվարկված չկատարված դրամային պարտավորությունների նկատմամբ:
3. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում Բանկը իրավունք է ստանում պահանջել վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարում:
4. Վարկի գումարի ու հասանելիք տոկոսների վաղաժամկետ վճարման պահանջը ներկայացվելու պահից վարկառուն պարտավորվում է վճարել 5-րդ կետով սահմանված չափի տուժանք՝ հաշվարկված Բանկի հանդեպ առկա ամբողջ դրամային պարտավորությունների նկատմամբ:
5. Տուժանքը սահմանվում է 0.12 տոկոսի չափով յուրաքանչյուր օրվա համար:
6. Տուժանքի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է տուժանք, պայմանագրով սահմանված տոկոսների հաշվարկը դադարում է:
7. Վարկառուն իրավունք ունի վարկը և հաշվարկված տոկոսագումարները պայմանագրում նշված ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի մարել, որի դեպքում վարկառուն վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև՝ ժամկետից շուտ մարվող վարկի գումարի 1տոկոսը: Վարկը տրամադրելու օրվանից երեք ամսվա ընթացքում ժամկետից շուտ ամբողջությամբ մարելու դեպքում վարկառուն պարտավոր է վճարել երեք ամսվա տոկոսագումար: Եթե պայմանագրի ժամկետը երեք ամսից պակաս է, ապա ժամկետից շուտ ամբողջությամբ մարելու դեպքում վարկառուն պարտավոր է վճարել տոկոսագումար՝ պայմանագրի ամբողջ ժամկետի համար: